ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 109

ք. Երևան 26.02.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 04243056, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Արտաշատ, գ. Այգեզարդ, Պռոշյան փող., տ. 34) միջև 20.01.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-10/9-10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը 2023թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.-ը պետք է մատակարարեր 788 քմ Դռներ (Դուռ մետաղապլաստե) և 1,000 քմ Պատուհաններ (Պատուհան մետաղապլաստե), որոնց մասով Պայմանագրով և դրան կից կնքված N1 Համաձայնագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊԸ-ի կողմից 413,912 քմ Դռներ (Դուռ մետաղապլաստե) և 148,163 քմ Պատուհաններ (Պատուհան մետաղապլաստե) ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ՍՏՐՈՅ ՄԱՍՏԵՐ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ